ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ

Դանիելյան Է. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհ, ազգ, հայ պատմագիտություն, քարտեզագրություն, ժառանգություն, տեղանուն, Անատոլիա:

1. Հայոց ավելի քան հինգհազարամյա ազգապետական՝ քաղաքական, հոգևոր-մշակութային, գիտական և գաղափարական ոլորտների աշխարհայացքային սնուցող ակունքներից է Հայկական լեռնաշխարհի՝ Հայ ազգի բնօրրանի բնապատմական ճշգրիտ պատկերը: Հայոց բնաշխարհի բնիկ տեղանունները հայտնի են հին և միջնադարյան սկզբնաղբյուրներից, քարտեզագրական, ազգագրական և ժողովրդագրական նյութերից:
2. Ազգային անվտանգության հրամայականով հայ պատմագիտության կարևոր ոլորտներից է հայկական պատմական ժառանգության պաշտպանությունը Հայոց ցեղասպանությունը գործած Թուրքիայի և նրա խամաճիկային դաշնակից արհեստածին Ադրբեջանի ոտնձգություններից:
3. Պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ իրականացնելով մշակույթի եղեռն՝ թուրքական պատմագրության և քարտեզագրության մեջ քաղաքական նպատակներով կատարվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի՝ Արևմտյան Հայաստանի տեղանունների համակարգի ոչնչացումը՝ «արևելյան Անատոլիա» տերմինի և կեղծ ու շինծու «տեղանունների» միջոցով: Այնինչ «Անատոլիա» հասկացությունը (իր բոլոր մասերով)՝ որպես աշխարհագրական

տերմին, վերաբերում է միայն Փոքր Ասիային, որը Հայկական լեռնաշխարհից արևմուտք է գտնվում:

4. Խորհրդային ժամանակներում սկիզբ առած ադրբեջանական կեղծարարների նենգափոխումներն Ադրբեջանի՝ ներկայիս ռազմամոլ ղեկավարության թելադրանքով և թուրք հրահանգիչների աջակցությամբ ընդարձակում են իրենց սահմանները, սակայն դրանցում պարունակված սուտն ու կեղծիքը խիստ քննադատվում է թե՛ հայ և թե՛ օտար մասնագետների կողմից:

5. Հայոց պատմությունը և հայկական տեղանուններն ազգային անվտանգության գաղափարական զինանոցի հիմքերն են «քարտեզագրական պատերազմում»՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարությունների: Անկախության հռչակումից և Արցախյան հաղթանակից հետո հայ պատմագիտությունը մեծ նվաճումներ է գրանցել՝ հայագիտական մեթոդաբանությամբ խորքային հետազոտությունների ասպարեզում, ինչը տեղեկատվական պատերազմում հակառակորդին հուժկու հարված հասցնելու ամուր երաշխիք է:

THE SYSTEM OF ANCIENT AND MEDIEVAL ARMENIAN TOPONYMS CHARACTERIZING THE CULTURAL COMPLETENESS OF THE ARMENIAN HIGHLAND

Danielyan E., (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of History, Armenia)